ՀԱՄԼԵՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Իսկ դու գիտե՞ս ուր ես գնում

ԵՐԵՎԱՆ
2011

ՀՏԴ 891.981-93 Մաթևոսյան
ԳՄԴ 84Հ7-5
Մ 151

Մաթևոսյան Համլետ

Մ 151 Իսկ դու գիտե՞ս ուր ես գնում: Մանկ.
բանաստեղծություններ / Համլետ Մաթևոսյան - Եր.:
«Փրինթինֆո» հրատարակչություն, 2011. - 16 էջ:

«Իսկ դու գիտե՞ս ուր ես գնում» գիրքը հեղինակի 9-րդ մանկական գիրքն է: Հրատարակված բոլոր մանկական գրքերը նպաստում են երեխաների մոտ ձևավորելու տարբեր վտանգներին դիմակայելու հմտություններ, զարգացնելու անվտանգության ապահովման մտածողություն: «Իսկ դու գիտե՞ս ուր ես գնում» մանկական բանաստեղծության միջոցով երեխաները ձեռք կբերեն տեղանքում կողմնորոշվելու վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ՝ ծանոթանալով բնության գաղտնիքներին:

Սույն ժողովածուն հրատարակվել է Եվրամիության կողմից ֆինանսավորված և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի /ՅՈՒՆԻՍԵՖ/ կողմից իրականացված «Աջակցություն Հարավային Կովկասի խոցելի համայնքներում և հաստատություններում աղետների ռիսկերի նվազեցմանը» ծրագրի շրջանակներում:

This work has been produced within the framework of “Support Disaster Risk Reduction amongst Vulnerable Communities and Institutions in Southern Caucasus” project, funded by the European Union and implemented by the United Nations Children’s Fund (UNICEF).

ՀՏԴ 891.981-93 Մաթևոսյան
ԳՄԴ 84Հ7-5

ISBN 978-9939-831-12-1

© Մաթևոսյան Հ. 2011

Ո՞վ եմ, ինչ եմ՝
Ես չգիտեմ,
Ինքս բարի
Իմ բնույթով
Դերասան եմ:
Ես սիրում եմ
Խաղալ դերեր՝
Մեկ երկրաշարժ,
Մեկ ջրհեղեղ,
Մեկ էլ վթար,
Կամ դեր մի այլ:
Ես չգիտեմ
Ո՞նց է լինում,
Ինչին դիպչում՝
Մի փորձանք եմ
Հետս բերում,
Դրա համար
Ինձ բոլորը
ԱՂԵՏԻԿ ԵՆ
Միշտ անվանում:

Իմ դերերը
Ես խաղում եմ
Այն դեպքերում,
Երբ որ մարդը
Վտանգները
Չի ճանաչում,
Կամ վտանգի
Ծագման դեպքում
Անելիքը
Չի իմանում:

Բեր քեզ գաղտնիք
Մի հատ ասեմ.
– Չիմանալը
Մեծ վտանգ է,
Ինքը տեղով
Հենց փորձանք է,
Որի համար
Մինչ դերերի
Իմ խաղալը,
Ճիշտ եմ գտնում
Ներկայացնել
Այն վտանգը,
Որի մասին
Չիմանալը,
Արդեն փաստ է,
Ինքը տեղով
Որ փորձանք է:

Ո՞վ չգիտի,
Որ մարդ կյանքում
Հաճախակի
Մասնակցում է
Հետաքրքիր
Արշավների,
Կամ ճամփորդում
Իրեն համար

Շատ անծանոթ
ինչ-որ վայրում,
Նման դեպքում
Պետք է լինում
Կողմնորոշվել
Այդ տեղանքում:

Կողմնորոշվել
Ասել է թե
Կողմ որոշել,
Իսկ կողմերը
Հիմնականում
Չորսն են լինում,
Մեկն արևելք,
Մեկն արևմուտք,
Մեկը հարավ
Մեկն էլ հյուսիս:

Մեկ էլ ասեմ
Այդ կողմերից
Որն էլ գտնես,
Մյուսները
Առանց ջանքի
Կորոշես,
Ասեմ ինչպես.
– Արի մի քիչ
Մոտիկ նստիր,
Ասածներս
Ուշիմ լսիր:
Եթե գիտես
Դու հյուսիսը,
Լավ իմացիր
Որ հյուսիսի
Հակառակը
Հենց հարավն է:
Դե ուրեմն
Եթե կանգնես
Դեմքով հյուսիս,
Քո աջ կողմը
Արևելքն է,
Մեջքիդ կողմում
Տաք հարավն է,
Իսկ ձախինը
Արևմուտքն է:
Կամ էլ եթե
Դու գտել ես
Արևելքը,
Կանգնիր այնպես,
Որ աջ կողմդ
Ուղղված լինի
Գտած կողմդ,

Պարզ է, արդեն,
Որ ձախ կողմդ
Ուղղված կլնի
Արևմուտքին,
Քո դիմացում,
Արդեն գիտես,
Որ հյուսիսն է,
Իսկ ետևում
Ճիշտ հարավն է:
Դե իսկ հիմա
Ինքդ ասա
Ինչպե՞ս գտնես
Դու կողմերը,
Եթե գիտես
Արևմուտքը,
Կամ էլ գիտես
Դու հարավը:

Ուզե՞մ, չուզե՞մ
Պիտի ասեմ.
– Ա՛յ շատ ապրե՛ս,
Դու կողմերը
Արդեն գիտես,
Դե իհարկե,
Ինձանից լավ
Դու այն գիտես:

Մեղքս քեզնից
Չթաքցնեմ,
Աղետիկ եմ,
Այսուհետև
Ինչ որ ասեմ,
Մեկը եթե
Այն չիմանա,
Հավատա ինձ,
Այցի կգամ,
Նրան կառնեմ
Ու կտանեմ
Կկորցնեմ,
Իրեն տեղը
Չի իմանա:

Բեր այդ մասին
Էլ չխոսենք,

Առաջ անցնենք,
Չէ՞ որ էլի
Խնդիր ունենք,
Ու շատ հարցեր
Պիտի պարզենք:

Արշավ ելնող
Կամ ճամփորդող
Մարդու համար
Անհրաժեշտ է
Կողմնացույց
Մոտն ունենալ:
Հիմա կասես.
– Դա ի՞նչ է, որ.
– Ասեմ, լսիր՝
Կողմնացույցն
Իր անունով
Քեզ հուշում է
Կողմ ցույց տվող
Ինչ որ մի սարք,
Այն իր տեսքով
Շատ նման է
Ժամացույցին
Ժամ ցույց տվող,
Սակայն ունի
Լոկ մի սլաք,
Ու չորս կողմեր
Նշագրված
Հարթ ցուցանակ,
Ինչպես նաև
Մի արգելակ,
Արգելակն էլ
Նրա համար,
Որ սլաքին
Տեղում պահի,
Ու շարժվելը
Արգելակի:
Հիմա լսի՛ր,
– Եթե պահենք
Այն զուգահեռ
Հորիզոնին,
Ու սլաքը
Արգելակից
Մենք ազատենք,
Հետո նրան
Մենք պտտենք,
Կամ էլ հետը
Մենք պտտվենք
Մինչ սլաքը
Ուղղվի ուղիղ
Զրո թիվը,
Արդեն պարզ է,
Որ այդ կողմում
Գտնվում է
Ցուրտ հյուսիսը,
Մնացածը
Ինքդ գիտես
Թե ինչ անես
Չորս կողմերը
Որ որոշես:
Մեկ էլ ասեմ
Որ կլինեն
Ինչ որ պահեր
Հնարավոր,
Երբ դու մոտդ
Կողմնացույց

Չես ունենա,
Այ օրինակ՝
Մոռացել ես
Թողել տանը,
Կամ էլ ձեռքից
Դու գցել ես,
Փշուր փշուր
Այն ջարդել ես…
Ինչևիցե
Եթե չունես,
Մի մտածիր,
Ժամացույցով
Կորոշես:

Գուցե գիտես
Արեգակը
Ո՞ր ժամին է
Հորիզոնի
Որ կողմերում
Միշտ հայտնվում,
Թե չգիտես
Հիմա կասեմ,
Իսկ թե գիտես
Նորից կասեմ,
Իմացածդ
Որ ստուգես:

Մինչ այդ ասեմ՝
Երկրագունդը
Բաժանվում է
Հյուսիսային,
Հարավային
Կիսագնդի,
Հայաստանը՝
Դե, հայտնի է,
Գտնվում է
Հյուսիսային
Կիսագնդում,
Հետևաբար
Ինչ որ ասեմ
Հյուսիսային
Կիսագնդի
Համար կասեմ:

Ուրեմն այսպես,
Փետրվարին
Մարտ ապրիլին,
Կամ սեպտեմբեր
Հոկտեմբերին
Արեգակը
Հայտնվում է
Արևելքում
Առավոտյան
Ժամը 7-ին,
Արևմուտքում
Երեկոյան
Ժամը 7-ին,
Իսկ հարավում՝
Դե ցերեկվա
Ժամը 1-ին:

Պիտի ասեմ,
Որ մայիսին,
Կամ ամառվա
Ամիսներին
Արեգակը
Հայտնվում է
Արևելքում
առավոտյան
Ժամը 8-ին,
Արևմուտքում՝
Երեկոյան
Ժամը 8-ին,
Իսկ հարավում՝
Տասնըչորսին:

Մեկ էլ ասեմ
Որ նոյեմբեր
Դեկտեմբերին
Ու հունվարին
Արեգակը
Արևելքում,
Արևմուտքում
Հիմնականում
Չի երևում,
Հայտնվում է
Այն հարավում
Դե ցերեկվա
Ժամը 1-ին:

Իմ թվարկած
Այդ ժամերին
Թե մոռանաս
Ու կողմերը
Չորոշես,
Հոգ մի արա,
Մի շփոթվիր,
Ժամացույցով
Որոշելու
Այլ ձևեր կան,
Որոնց մասին
Հիմա կասեմ:

Մինչև կեսօր
Թե ուզենաս
Դու որոշել

Որևէ կողմ
Դու քո ձեռքի
Ժամացույցը
Պահիր այնպես,
Որ սլաքը



Ժամ ցույց տվող
Արեգակին
Ուղիղ նայի,
Իսկ նույն պահին
Դու կենտրոնը
Ժամացույցի
Մի հատ գծով
Միացրու
Ժամը մեկին
Ու կստանաս
Ինչ որ անկյուն,
Այդ անկյունը
Կիսող գծի
Ճիշտ դիմացում
Հավատա ինձ
Որ հարավն է
Հենց գտնվում:
Եկ դիտարկենք
Մի ուրիշ դեպք,
Բեր ենթադրենք
Մոռացել ես
Կողմնացույցը,
Ձեռքիդ չկա
Ժամացույցը…
– Չեմ հասկանում
Թե ինչո՞ւ ես
Այդպես նայում,
Քեզ թվում է
Եթե դրանք
Դու չունենաս
Ապա ոչինչ
Չե՞ս իմանա…
– Ա՛յ տեսնում եմ
Դու մտածել
Սկսեցիր,
Ուրեմն ասա
Ո՞վ մեզ կօգնի,
– Դե իհարկե
Բնությունը,
Դե իհարկե
Ծուրջդ եղած

Ամեն ինչը,
Ու թե դրանք
Լավ ճանաչենք,
Իրենք կասեն
Ինչպես անենք:

Երկար բարակ
Բեր չխոսեմ
Արի ասեմ,
Որ ծառերի
Հյուսիս նայող
Բնի մասում
Կեղևը քիչ
Կոշտ է լինում,
Կամ էլ մի քիչ
Մուգ է լինում,
Այն էլ ասեմ,
Որ եղևնու
Կամ էլ սոճու
Հարավ նայող
Բնի մասում
Նկատվում է
Իրենց խեժի
Արտադրություն:
Հապա նայի՛ր,
Նույն ծառն է

Տերևներն են
Մի քիչ ուրիշ,
Տերևներին
Քիչ ուշադիր
Եթե նայես,
Դու կտեսնես,
Որ մի կողմի
Տերևները
Մեծ են ասես,
Գույնն էլ կարծես
Մի քիչ վառ է,
Մյուս կողմի
Տերևները
Մի քիչ փոքր են,

Գույնն էլ կարծես
Մի քիչ մուգ է,
Ասել կուզեմ
Մուգ կանաչ է:
Պարզ է արդեն,
Որ այն կողմը,
Դեպի որը
Տերևները
Մի քիչ մեծ են,
Իսկ գույները
Տաք կանաչ են,
Դա հարավն է:
Բա մրգերը,
Պտուղները
Դեպի հարավ
Նայող մասում

Փոքր ինչ շուտ են
Հասունանում,
Իրենց գույնով
Մոտ են կանչում:
Էլ չեմ ասում
Որ երբեմն
Կտրած ծառը
Նույնպես կօգնի
Որ որոշես
Դու կողմերը,
Դե իհարկե
Վայրը եթե
Քամիներից
Պաշտպանված է:
Ասեմ ինչպես,
– Կտրած ծառը
Վրան ունի
Օղեր կյանքի,
Այդ օղերը
Դեպի հարավ
Ուղղված կողմում
Մեկը մեկից
Քիչ հեռու են
Ընկած լինում,
Քան թե հյուսիս
Նայող կողմում:

Նորից ասեմ,
Քեզ հիշեցնեմ,
Որ այս ձևը

Ճիշտ է լինում
Միայն-միայն
Քամիներից
Զուրկ վայրերում:
Իսկ ձմռանը
Դեպի հյուսիս
Նայող լանջին
Ձյունը մի քիչ
Պինդ է լինում,
Իսկ դե լանջին
Հարավային
Հատիկավոր
Ձյուն է լինում:

Նույնն է նաև
Անտառներում,
Ու ծառերի
Հյուսիսային
Կողմը նայող
Բնի մասում
Ձյունը մի քիչ
Պինդ է լինում,
Հարավային
Կողմը նայող
Բնի մասում
Հատիկավոր
Ձյուն է լինում:

Իսկ գարնանը
Դեպի հարավ
Լեռան լանջը
Քնից կարծես
Ծուտ է ելնում
Ու այդ լանջում
Ձյունն ավելի
Ծուտ է հալվում,
Քան թե ասենք
Այդ նույն լեռան
Հյուսիսային
Ձնոտ լանջում:

Համոզված եմ՝
Դու էլ գիտես,
Որ իսկապես
Մրջյուններն
Իմաստուն են,
Եթե կուզես
Մրջյուններից
Սովորելու
Շատ բան ունեք:

Միջյուններն
Իրենց բույնը
Կառուցում են
Հիմնականում
Անտառների
Նոսր մասում,

Կամ միայնակ
Ծառերի տակ,
Բնին մոտիկ,
Այն էլ այնպես,
Որ բների
Դռան շեմը
Ուղղված լինի
Ճիշտ հարավին:

Միջնանոցի
Տեսքն էլ դու տես՝
Եվ կլոր է
Եվ ուռուցիկ,
Ու այդ կողմը
Ցույց է տալիս
Հենց հարավը,
Իսկ դե բնի
Թեքությունը
Ուղղված է միշտ
Հակառակը,
Ասել կուզեմ
Դեպ հյուսիսը:

Բա թիթեռը,
Թիթեռների
Թևիկները
Ո՞նց են հուշում
Քեզ կողմերի
Գտնվելու
Իրենց տեղը:

– Հանգստացող
Թիթեռների
Թևիկները
Առավոտյան
Արևելք են
Միայն նայում,
Երեկոյան
Արևմուտքի
Կոմն են ուղղվում,
Իսկ կեսօրին
Պարզ է արդեն
Որ հարավին:

Դե իսկ հիմա
Քո հայացքը
Այնպես լարվեց,
Որ հասկացա
Տեղն ու տեղը
Պիտի լսես
Պատասխանը:

Բեր հոգուտ հետ
Շատ չխաղամ,
Միանգամից
Ասեմ, գնամ.

Շրջապատում
Թե հանդիպի
Եկեղեցի,
Լավ իմացիր

Որ խորանը
Եկեղեցու
Արևելքի
Կողմն է լինում,
Եվ գլխավոր
Մուտքն անպայման
Արևմուտքի
Կողմն է լինում,
Ու նույն ձևով
Եկեղեցու
Գմբեթների
Խաչն է լինում,
Ասել կուզեմ
Արևմուտքից
Դեպ արևելք:

Էլ չեմ ասում
Որ քարերի,
Կամ պատերի,
Կամ էլ ասենք
Ծառի բնի
Հյուսիս նայող
Կողմի մասում
Մամուռներն ու
Քարաքոսն են
Աճել սիրում:
Բան է, եթե
Ճանապարհիդ
Գետ հանդիպի
Կամ էլ առու,
Դու ճիշտ կանես
Հետը գնաս,
Ջուրը երբեք
Քեզ չի խաբի
Ու անպայման
Ինչ որ մարդկանց
Մոտ կտանի:

Դե ինչ ասեմ,
Ինչ մինչ հիմա
Ես ասել եմ,
Երկու այդքան
Դեռ քեզ կասեմ,
Չթաքցնեմ,
Ես ամեն ինչ
Հո չգիտեմ.
Կողմ գտնելու
Հազար տեսակ
Միջոցներ կան,
Որոնց մասին
Ես չգիտեմ
Ու քեզ նման
Ես էլ պիտի
Դեռ սովորեմ:

Այո, ճիշտ է,
Այս բոլորը
Եթե մարդը
Լավ իմանա,
ԱՂԵՏԻԿԻՑ
Ամբողջ կյանքում
Չի վախենա: